

Հողվածներ

«Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» Օրենքից

Գլուխ - Դ : Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կազմը, ձեւավորումը, իրավունքները եւ պարտականությունները

1) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) Արեւմտյան Հայաստանի բարձրագույն օրենսդիր եւ ներկայացուցչական մարմինն է:

2) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կազմը բաղկացած է նվազագույնը 55, առավելագույնը 115 պատգամավորից:

3) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորներ պաշտոնավարման ժամկետը հինգ (5) տարի է:

4) Ընտրությունները անցկացվում են ուղղակի եւ գաղտնի քվեարկությամբ:

7) Ընտրություններին մասնակցում են միայն Արեւմտյան Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր պաշտոնապես ընդունում են Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Հայտարարությունը եւ հիմնարար փաստաթղթերը:

9) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցելու համար պատգամավորներն ու թեկնածուները պարտավոր են ունենալ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն եւ սահմանված կարգով գրանցվել, ներկայացնելով՝

- անձը հաստատող փաստաթղթեր,

- սահմանված նմուշով՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովում թեկնածության եւ պատգամավորական գրանցման հայտ,

- նախընտրական ծրագիր,

- ինքնակենսագրություն,

11) Փոխարինման (կոոպտացիա) եղանակով լրացուցիչ ընտրությունների դեպքում Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորության թեկնածուն պարտավոր է ներկայացնել ոչ պակաս քան 200 (երկու հարյուր) Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների ստորագրությունների ցուցակ, ովքեր առաջադրում են նրա թեկնածությունը՝ որպես Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավոր:

12) Ընտրված պատգամավորների լիազորությունները հաստատվում են՝

-Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի նիստի պատգամավորների հասարակ մեծամասնության որոշմամբ,

13) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորներ, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել՝

-անձինք, ովքեր Արեւմտյան Հայաստանի քաղաքացի չեն,

-անձինք, ովքեր կատարել են քրեական հանցագործություն եւ այդ պահին գտնվում են ազատազրկման վայրում,

-անձինք, որոնց վրայից դատվածությունը հանված չէ՝ քրեական հանցագործության համար,

-անձինք, ովքեր դատարանի որոշումով համարվել են անգործունյա,

-անձինք, ովքեր իրենց գործունեությամբ կամ անգործությամբ վնաս են պատճառում՝ Արեւմտյան Հայաստանին եւ Արեւմտյան Հայաստանի պետական կառույցներին: